

ՀԱՅ ԵՐԱԺԻՇՏ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐ

Ե.—ԺԵ.—ԴԱՐ

Կոմիտաս տաճարը փառալուրդալից կանգնեցնելուց յետոյ, որի ճարտարապետը շատ հաւանաբար ինքն է եղել (ինչպէս էջմիածնի տաճարինը Լուսաւորիչը եւ 620 Թուականի Զուարթնոցի ճարտարապետը՝ Ներսէսը), երանելի կաթողիկոսը մտածում է նոյն հանդիսութեամբ կատարել նաեւ տաճարի նաւակատիքը։ Այս առթիւ նա գրում է հոգեւոր բանաստեղծութեան անդին մի գուհար՝ «Անձինք Նուիրեալը» օրհներգութիւնը։ Է. Դարում Հռիփսիմէի նահատակութեան պատմութիւնը որպէս առաջինի եւ հաւատաւոր կնոջ կերպար, խոր յարգանքի էր արժանացել ժողովրդի հոգում։

Սեփէոսը եւս խանդավառուած Ս. Հրաբիսիմէով, բացազանչում է. «Ով մարգարիտ որ ոչ ծովածին, այլ մարգարիտ ծնեալ ի Թաղաւորական ազգէ, սնեալ ի դերկա սրբութեան եւ նուիրեալ յԱստուծոյ որում ցանկացեալ էին տեսանել արդարք եւ խանդակաթ էր ի սէր ըր երանելին Կոմիտաս»։ Ինչպէս երեւում է Սեփէոսի այս մէջբերումից, Հռիփսիմէ կոյսերին նուիրած մի ներբողեան կար գրուած, որից որպէս ներթ օգտուել են Սեփէոսը եւ Կոմիտասը։

Մեզ հասած բոլոր ձեռագրերում «Անձինք»ը վերադրուած է Կոմիտաս Կաթողիկոսին, այս մասին ոչ մի կասկած չի եղել հնումս եւ նոր ժամանակներում. բայց չլրջանի միակ պատմիչ Սեփէոսը իր «Պատմութիւնն Ի Հերակի» աշխատութեան մէջ խօսում է Կոմիտասի շինարարութեան մասին, բայց չի յիշատակում «Անձինք»ը։ Սակայն երբ համեմատում ենք Սեփէոսի մէջ յիշուած տողերը Հռիփսիմէի կոյսերի մասին՝ «Անձինք»ի հետ, տեսնում ենք որ Սեփէոսը օգտուել է այդ օրհներգութիւնից։ Բանասէրներից ոմանք էլ այսպէս են մտա-

ծում, թէ Սեփէոսը օգտուել է «Անձինք»ից։ Մեր մատենագրութեան մէջ «Անձինք»ը նորութիւն է թէ իր բովանդակութեամբ եւ թէ ձեւի գեղեցկութեամբ ու զանազանութեամբ։ Կոմիտաս Կաթողիկոսը կոյսերի պատմութիւնը վերցրել է Ագաթանգեղոսից, բայց որպէս բանաստեղծութիւն այն ենթարկել է գեղարուեստական մշակման, կազմելով գեղեցիկ պատկերներ ի մի ընդթայ՝ որի իւրաքանչիւր օղակի վրայ իշխում է սոսնական մի ցնծութիւն։

«Անձինք»ը մեր շարահնոցի գուհարն է եւ հոյակապ մի ներբողեան՝ նուիրուած Հռիփսիմէ կոյսերին։

Բանաստեղծ հայրապետը կոյսերի նահատակութիւնը դիտում է երկու տեսանկիւնից. այն է՝ Գրիստոսի սիրոյն նահատակուող իմաստուն կոյսեր որոնք քաղուածքով եւ կուտով են մարմնական կենցաղի դէմ։ Նորն այն է այստեղ, որ Կոմիտասը իր ժամանակի ոգուն հակառակ երգում է կոյսերի մարմնական գեղեցկութիւնը որը հրապուրել է ամէնքին. հենց դրա համար էլ Կոմիտասը, իբրեւ իր ժամանակակիցներից աւելի լուսամտի, յառադրիմական մի անձ, «Անձինք»ի արժէքը աւելի է բարձրացնում։

Հռիփսիմէի գեղեցկութեան վրայ յիմարանում են ոչ միայն Թաղաւորը եւ պալատականները, այլ նաեւ ճարտարացեալ զուարթունքը։ Գեղեցիկ է տեսարանը, երբ յանուն գեղեցկութեան եւ պարկեշտութեան սկսում է կռիւ մի կողմից Թաղաւորի եւ կոյսերի միջեւ, միւս կողմից երկրի եւ երկրնքի միջեւ։ Կոյսերը հաւատքով եւ սրբութեամբ դիմում են ինչու եւս մարտի դաշտ հաստատմիդ աղեղների եւ փառքով ու զուրութեամբ պերճացեալ Թաղաւորների դիմաց։

Դէմ առ դէմ են կանգնել սէզ Տրդատը եւ առաքինի Հռիփսիմէն։ սկսում է մարտը։ Զարմացած նայում են մարդիկ, հրեւողներ, նոյնիսկ Աստուած։ Յաղթում են Հռիփսիմեանք։ Կոյսերի նահատակութիւնը առիթ է դառնում Հայոց աշխարհի փրկութեան։

«Զուգը փրկութեան, բառնալով զխաւար ժողորութեան, եւ եղեն փրկա՞ջ աշխարհին Հայոց»։ «Ապա ծնան կուսանք ազգս բաղում»։ Ահա այս կոյսերից էր որ «ծնաւ» Հայ քրիստոնէութիւնը։

«Անձինքը» գրութեմ է տաղաչափական աղատ արուեստով եւ իշխեցում է յունական տաղաչափութիւնը։ Գրուել է այրենական կարգով^(*)։

Մեր Հոգեւոր երգերի մէջ Կոմիտասի այս գործը ընտիրներէից մէկն է թէ բովանդակութեամբ եւ թէ ձեւի գեղեցկութեամբ։ Այստեղ հնչում են քնարերգութիւնն ու երաժշտութիւնը։

Ոտելով Հոգեւոր երգերի տեսակների եւ նրանց կառուցումների մասին, Մ. Արեղեանը մեծ տեղ է յատկացնում ազատ չափերով քերթուածներին։ «...Իրանք իրենց կազմութեամբ աւելի մօտ են երաժշտական եղանակին, զի այս ոտանաւորների հիշդ առողջանման ժամանակ, որ աւելորածեւտ է երաժշտական ուրիշի համար, վանկեր մերթ ծանր են արտասանւում, մերթ թեթեւ ու արագ, որով եւ դրանց առողջանութիւնը երգեցիկ բնաւորութիւն է ստանում։ Հնում այդ ոտանաւորները կապւած են եղել երգի եղանակի հետ»։ Որպէս այդպիսին, Կոմիտաս Կաթողիկոսի «Անձինքը» նուիրեալը՝ ամենակարեւոր նմուշն է հանդիսանում։

Կոմիտասի «Անձինքը» յօրինւած է եռաւանկ անապետանոց ոտքերով։ Չորս այդպիսի ոտք կազմւած են մէկ, հետեւաբար մէկ տողը մեթրական չորս շեշտ ունի։ Տողի ամբողջութիւնը զգալի է վերջին զաւարով։ Նոյնիսկ, բայց ընդհանուր առմամբ աւելի փոքր զայլար է ունենում բովանդակութեան համեմատ՝ նաեւ ամէն մի

տողի առանձին կիսատողը եւ ընդհանրապէս, ամէն մի ոտք։

Այսպիսի կառուցւածք ունեն բոլոր այն տողերը որոնք կանոնաւոր կաղմուած են, այսինքն թերի չեն։ Սակայն քանի որ «Անձինքը» գրուել է ազատ չափով, յաճախ հանդիպում ենք նաեւ երեքից աւելի կամ պակաս անդամներից բաղկացած «աղատ» ոտքերի։ Արեղեանը ընդհարապէս այս անհամաչափ ոտքերի մասին ասում է, որ «կարճ» ոտքերն աւելի զօրեղ շեշտուելով ներքին երկարացում են ձեռք բերում, իսկ «երկար» ոտքերը զօրեղ շեշտից յետոյ զաւարով՝ արագ են արտասանւում, այսինքն դրանց անդամների տեւողութիւնը համապատասխան չափով կրճատւում է։

Կան այնպիսի ոտքեր էլ, որոնք իրենց պակասը լատկանանք լրացնում են նախորդ ոտքի վերջին անշեշտ մասից, Մ. Արեղեանը թերի ոտքերի մասին ասում է. «Տողաւորի առաջին ոտքի ամանակի հաւասարեցումը նորմալ ոտքերին ընդհանրապէս՝ նկատի չի առնւում, զի տողասկզբում ուրիշը դեռ որոշ կերպարանաւորւած չէ»։

Երբ տողը սկսւում է շեշտով, այսինքն մի վանկով, այդ միավանկ ոտքը երկարւում է եւ հաւասարւում լրիւ ոտքին։

«Անձինքը», ինչպէս ժամանակի ողին էր պահանջում, շատ պարզ եւ սահուն ոճով է գրւած, կարծէք յատուկ ժողովրդին ոգեւորելու համար. դա երեւում է նաեւ խաղային ձայնագրութիւնից, որովհետեւ ամբողջ երգի մէջ գործածուած են միայն տաս խաղատեսակներ։

Եթէ Կոմիտաս Կաթողիկոս ոչինչ գրած չլինէր, նրա «Անձինքը» նուիրեալը, այս ճաղղաբալուր բանաստեղծութիւնը կը բաւէր որ նրան դասէինք է. Դարի մեր մեծագոյն բանաստեղծների կարգին։ Եթէ ամբողջ է. Դարից մեղ հասած չլինէր եւ ոչ մի օտեղծագործութիւն, «Անձինքը» կը բաւէր որ մենք լրիւ գաղափար կաղմէինք այդ դարի բանաստեղծական, գրական, տաղաչափական եւ երաժշտական մակարդակի մասին.

Անմահ է Կոմիտաս Կաթողիկոս՝ իր կոթողած Ս. Հռիփսիմէն տաճարով եւ «Անձինքը» նուիրեալը՝ շարականով։

(*) Այրենական կարգը գրականութեան մէջ առաջին անգամ յայնքին են օգտագործել։

Ս Տ Ե Փ Ա Ն Ո Ս Ս Ի Ի Ն Ե Ց Ի

Ստեփանոս Սիւնեցիին ծնունդ է 668 թվականին: Որդին է Սահակ անուշավ մի աւաղերեցի: Նախնական ուսումը ստացել է Դուրինի հայրապետանոցում, ապա աշակերտել է նշանաւոր «Հարանց հայր» Սողոմոն Վարդապետին^(*): «Յետ լինելոյ հասակին, ոչ կամէր թաքչել ջահն ընդ գրբւախաւ մարմնոյ, այլ հրավառէր ի բաղմամբոյ զաղաքէն եւ գնայր ի Համարաւտոնէ եւ մեծաքանի հանդիսարանն, ի հրբոշտակերամ կրօնաստանն ասորբ եւ յԱստւածնակ առաքինարանն Մաքենացոյ»:

Մաքենացոյ վանքում Ստեփանոս Սիւնեցիին ճգնաւորական մի կենսք է վարում: Այս վանքից փոխադրւում է Սիւնեաց գրպրոցը: «Ելաղիւր իմաստից ի վարդապետարանն Սիւնեաց, որ գլուխ էր ամենայն գիտնոց Հայոց, եւ պայծառացաւ դպրոցքն որ ի նմա»^(**): Այստեղ Ստեփանոս Սիւնեցիին աշակերտում է Մովսէս եպիսկոպոսին (Հաւանարար Մովսէս Քերթոյն է), որի մասին Հայր Ալիշան «Միապանծում գրում է. «Քաղոսումն էր Մովսէս եպիսկոպոս յեսլ կոյն Է. Դարաւ. յորմէ մարդեցաւ վեհագոյնն իմաստասիրաց Սիւնեաց եւ անհամեմատն Ստեփանոս»: Ապա Ստեփանոսը դառնում է ուսուցիչ աստուածաբանութեան եւ գիտութեան ամպիոնի վարիչ եւ ընդհանուր ղեկավար Սիւնեաց դպրոցի:

701 թվականին փրկոսփայտութիւն տուողը լուծար մեկնում է Աթէնք, Կ. Պոլիս, ուր ծանոթանում է Հայագգի գիտնական Դաւիթի հետ, որի ձեռնառութեամբ Ստեփանոս Սիւնեցիին զբաղւում է եկեղեցական նշանաւոր հայրերի գործերի թարգմանութեամբ: Կ. Պոլսում Սիւնեցիին կատարում է հետեւեալ թարգմանութիւնները. Դիոնիսիոս Արիսպակացու «Յաղագս երկնայնոց» քահանայապետութեանցը, Գրիգոր Նիւսացու «Յաղագս կաղմութեանմար-

զոյ» եւ Նեմեսիոս Եմեսացու «Յաղագս բրնութեան մարդոյ»: Իսկ Արիսպակացու դժուարիմաց գրքի համար մի լուծմունք գրում է:

Կ. Պոլսում Ստեփանոս Սիւնեցիին ծանոթանում է Գերմանիկոս գիտնական պատրիարքի հետ: Պատրիարքը հետաքրքրուելով Հայոց դաւանանքով, խնդրում է նրանից որ գրի Հայոց դաւանութեան մասին: Սիւնեցիին գրում է: Պատրիարքը «Հաւատոյ» մի թուղթ է գրում Հայոց կաթողիկոսին եւ առ լիս Սիւնեցուն, որ տանի տեղ հասնի: Սիւնեցին 620 թվականին վերադառնում է Հայաստան եւ ինքն անձամբ պատասխանում է պատրիարքին: «Ելոյժ դարմացուցիչ բանիք»: Այստեղ նա պարապում է գրականութեամբ: Գրում է շարականներ, կցուղներ, Յոբի, Եղեկիէլի եւ Աւետարանների մեկնութիւններ:

Դուրեւում Սիւնեցիին վէճի է բռնւում Մմրատ Բագրատունի քաղկեդոնիկ մի իշխանի հետ: Նա անբարար գգալով իր գիտութիւնը, վերադառնում է Կ. Պոլիս, որտեղ արքունական մատենադարանում ուսումնասիրում է Հայ եկեղեցւոյ պատմութիւնը եկեղեցական մեծ հայրերի գրութեան: Մատենադարանում գտնում է մի շատ կարեւոր ձեռագիր. «Յգիտ աստուծոյ մի ոսկեանուփ որ պատմէր զուղղափառութիւնն հաւատոյ հաստատեալ յառաջին սուրբ հայրապետացն» ի զխաւրաց երից սուրբ ժողովոցն»: Սիւնեցիին այս արժէքաւոր գրութիւնը ուղղակիւմ է կայսր, որը զարմանում է Հայոց ուղղափառութեան վերայ: Կայսրը հրամանով Ստեփանոսը մեկնում է Հոռոմ, ի նպատակ Հայ դաւանանքի պրպտութեան կատարելու համար: Նրան յաջողւում է գտնել նաեւ մի քանի այլ գրութիւններ եւ փաստեր:

Ստեփանոս Սիւնեցիին 728 թվականին վերադառնում է Հայաստան: Օձնեցուն մահացած է գտնում: Նրան յաջորդել էր Դաւիթ Կաթողիկոսը, վերջինը մեծ ուրախութեամբ ընդունում է Սիւնեցուն եւ առնելով Հռոմից բերած ճշգրտափառ հաւատոյ գրութիւնները գործ տեսեալ զուարճացաւ յոյժ, եւ սիրեալ զսուրբն եւ պատուեալ

(*) Մաքենացոյ վանքի վանապետ, որ 701 թվականին ձեռնադրւել է գրել վկայարանութիւնների մի ժողովածու:

(**) «Ստեփանոս Սիւնեցի. Մեծրապ Վրդ. Գրիգորեան, Պէյրաւք, 1958:

բառ անձին իւրում, ապա աայ ի նա դամե-
նայն գործն հոգեւորս տան կաթողիկոսա-
րանին»։ Ապա նշանակում է Սիւնեաց տոմ
մեթապոլիտ, որը վարում է մինչև 735
թուականը։

Սիւնեցի եղել է շատ օրինակելի առաջ-
նորդ։ Նա ճբաղըր խառութեամբն առաջ-
նորդում էր եւ զորպէս սուր հատանէր զախ-
տացեալսն եւ թէ որպէս ծնող զողայսն ի
Քրիստոս կաթն ջամբեցուցանէր։ Սակայն
երանելի սուրբը, «վեհապոյն իմաստասի-
րաց», զոր է գնում ախտացեալներէ հան-
դէպ իր ունեցած խիստ վերաբերուէջին։
Սիւնեցիի զոր է գաւռնում մի պոռնիկ կնոջ
վրէժխնդրութեան։ Նա սպանում է 735
թուականին, Նրա դիակին կարճ ժամանա-
կով հանգաւարան է լինում Մոզան կամ
Մոզն գիւղը, բայց քառասուն օր վերջ մեծ
շուքով նրա մարմինը տեղափոխում են Թա-
նահատից^(****) վանքը։ Հիւռեալ Արկաղան
դեօզն (մահը) տերաժի իրեանց էլին ընդա-
ռաջ եւ հաւանեցուցին զպատաւարսն հաւ-
դուցանել ի սենեակն որ յանուն սրբոյն Քր-
իստոսի անյաղթ զօրափարին շինեալ էր,
զոր տարեալ անդէն հանդուցին ի սենեակին։
Իսկ յետ քառասուն աւուր պատուհաթի
(Վայոց Ձորոյ) ժողովեալք մուսցորդէն դա-
ւառին կոչեն զկաթողիկոսն եւ տանեն վա-
նականաց ժողով, եւ բազում աւուրս կա-
տարեալ փոխեն զնշխարսն սրբոյն ի միա-
բնակաց վանսն Թանահատից^(*****)։

Ստեփանոսի մահուան հետ կապուած է
մի շատ եղբրական պատմութիւն։

Մոզան գիւղում Ստեփանոս Սիւնեցիին
հանդիպում է մի պոռնիկ կնոջ եւ խրատում
նրան որ զղջայ եւ ապաշխարի։ Ճերբում
բնակեալ էր կին մի (Մոզան գիւղում) գե-
հեղ արգեալ իմարութեան ախտին, զոր
յառաջ քան զայն երկուս անկամ զգուշա-
ցուցեալ էր զնա ըստ Տեառն Հրամանի եւ ոչ
էր զղջացեալ։ Նրան քանադրում է եւ ապա

եկեղեցուց քշում։ Ստեփանոս սրտեղած
գիւղից դուրս է ելնում եւ մի աղբիւրի ե-
զերքում «վասն աօթաժամուն» հանդառա-
նում։ Նա բարձրանում է մի ուռիի վրայ եւ
ննջում։ Իսկ անբարոյ կինը հետեւելիս է եւ
դեւ Ստեփանոսին, որովհետեւ ուղեցել է
վրէժխնդրի լինել նրանից։ Զարժեալ ի կա-
տաղի բոցոյ ցանկութեան, իր հոմանիս
հետ մօտենում են սրբին։ Անբարոյ կինը մի
դաշոյն է առլիս իր հոմանուն, որպէսզի
սպաւի սրբին։ Սա մօտենում է Սիւնեցուն,
տեսնում նրա անմեղ, հանդիստ դէմքը,
մեղքը չի բարձրանում եւ սարսափած ու
զողանար վերադառնում է։ Սակայն կինը
կրկին անգամ քաղցր խօսքերով նրան հա-
մողում է եւ ուղարկում՝ որ անպայման ըս-
պանի սրբին։ Երկրորդ անգամ հոմանին ըզ-
գացում է եւ աւելի սարսափում՝ տեսնելով
սրբի հանգիստ, հրաշալեղ ճակատը-
հեղբրեալ թուլանայր եւ ամենայն յօդ-
ւածքն խաղայր, շարժէր։ Գողցաւ օտոկ
մամբ։ Նորից չի կարողանում սպանել։
Իսկ պոռնիկ կինը փոխանակ զղջալու Զա-
րացեալ եւ սրեալ ի բանարկունէն, հոս
մահու մեծից առնում է դաշոյնը եւ ինք
խրում Ստեփանոսի կուրծքը։

Սիւնեցու մահից յետոյ, պատմում է
յիւ մեծ հրկրաւարժ է եղել եւ քառասուն օր
այդ գաւառի վրայից անպակուս է եղել պա-
տուհար, Շաա տարօրինակ է նաեւ այն,
որ այդ անբարոյ կինը հետագայում զղջում
է մի աքնախի տրոսասովոր կերպով, որ
մինչև օրս նման բան չի պատահել։

Նա զղջացել է իր կատարած անբարո-
յութեան եւ գործած մեղքերի համար, եւ
մերկանալով կուրծքն ու մարմինն է ծածկել
քարերով։ Եւ այնքան բախէր՝ զի իջանէր
մտակ արեանց։ Նա բարձրադպրակ խոս-
տովանում է իր կատարած ոճրադործու-
թիւնը եւ նուաստացնում ինքզինք։ Ապա
գնում է այն վանքի դիմաց ուր ապրում էր
Սիւնեցին, մի փոս է փորում եւ մինչև
մէջքը ինքզինք թաղում նրա մէջ։ Եւ թաղ-
եալ զամեն միւր, յափնես եւ զամառն եւ
զամհոռն տապակէզ եւ ցրտահար լինելով
վայել եւ ողբարժ։

(****) Այդ վանքում ապրոզ ձգմաւորմբք ոչ
կաք, ոչ մանում իւ աջ փնեզն էին ուստս, այլ
սնում էին միայն բաժարեղէնով։ Դրա համար էլ
վանակամբրին հռչիւ իմ քրահանադիւս այսնմբ
բամից կտրաւծմբք։

(*****) Վիսալան, Հ. Ղևոնց Ալեշան, Վեմե,
տիկն 1855։